«ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՖՈՐՈՒՄԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊԼԱՏՖՈՐՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «Արեւելյան գործընկերության Քաղաքացիական հասարակության ֆորումի Հայաստանի ազգային պլատֆորմի քարտուղարություն» հասարակական կազմակերպությունը (հապավումը՝ «ԱլԳ ՀԱՊ Քարտուղարություն» ՀԿ, այսուհետ՝ Կազմակերպություն), սույն կանոնադրության 2-րդ կետով սահմանված Կազմակերպության ընդհանուր շահերը և նպատակները ներկայացնելու և պաշտպանելու նպատակով ստեղծված իրավաբանական անձանց հասարակական միավորում է, որոնք օրենքով սահմանված կարգով միավորվել են իրենց շահերի ընդհանրության հիման վրա՝ հոգևոր և ոչ նյութական պահանջմունքների բավարարման նպատակով:

1.2. Կազմակերպության հայերեն լրիվ անվանումն է՝
«Արեւելյան գործընկերության Քաղաքացիական հասարակության ֆորումի Հայաստանի ազգային պլատֆորմի քարտուղարություն» հասարակական կազմակերպություն

ռուսերեն՝ «**Секретариат Армянской национальной платформы Форума гражданского общества Восточного партнерства**» **Общественная Организация**
անգլերեն՝ «**Secretariat of the Armenian National Platform of the Eastern Partnership Civil Society Forum**» **Non-governmental Organization**

1.3. Կազմակերպության հայերեն կրճատ անվանումն է՝ «ԱլԳ ՀԱՊ Քարտուղարություն» ՀԿ:

1.4. Կազմակերպության գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երեւան, 0002, Եկմալյան փողոց, 7, բն 6, հեռ. 010500665:

1.5. Կազմակերպությունն իր գործունեությունն իրականացնում է ՀՀ Սահմանադրությանը, ՀՀ օրենսդրությանը, ՀՀ միջազգային պայմանագրերին եւ սույն Կանոնադրությանը համապատասխան:

1.6. Կազմակերպության անդամները պատասխանատու չեն Կազմակերպության պարտավորությունների համար, իսկ Կազմակերպությունը պատասխանատու չէ իր անդամների պարտավորությունների համար:
1.7. Կազմակերպությունն իրավաբանական անձ է եւ ստեղծված է համարվում օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից: Կազմակերպությունն ունի իր անվանմամբ (հայերեն, ռուսերեն եւ անգլերեն գրառումներով) եւ խորհրդանիշի պատկերով կլոր կնիք: **Կազմակերպությունն ունի խորհրդանիշ**՝ վեցաթեւ բազմագույն (կանաչ, երկնագույն, նարնջագույն, դեղին, փիրուզագույն, կարմիր) ճառագայթների (ճառագայթներից յուրաքանչյուրը խորհրդանշում է Արեւելյան գործընկերության անդամ երկրներից մեկը) տեսքով պատկեր, որոնք միավորվում են մեկ ընդհանուր կապույտ շրջանակաձեւ պատկերի շուրջ, որը խորհրդանշում է Եվրոպական միությունը: Պատկերի աջ կողմում՝ իրար հաջորդող երեք տողերում, մեծատառ և կապույտ տառերով գրված է «ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՖՈՐՈՒՄԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊԼԱՏՖՈՐՄ» բառակապակցությունը:

Կազմակերպությունը կարող է ունենալ դրոշմներ եւ բլանկներ, ինչպես նաեւ օրենքով սահմանված կարգով գրանցված ապրանքային, առեւտրային եւ այլ նշաններ ու անհատականացնող այլ նշաններ: Կազմակերպությունն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով բացել բանկային հաշիվներ Հայաստանի Հանրապետության եւ օտարերկյա պետությունների բանկերում՝ Հայաստանի Հանրապետության դրամով եւ (կամ) արտարժույթով:

1.8. Կազմակերպությունն ինքնուրույն է որոշում իր գործունեության ռազմավարական ծրագրերը:

1.9. Կազմակերպությունը որպես սեփականություն, ունի առանձնացված գույք եւ պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է անունից կնքել պայմանագրեր, ձեռք բերել ու իրականացնել գույքային եւ անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

1.10. Կազմակերպությունն իր կանոնադրությանը համապատասխան, սեփականատիրոջ իրավունքով, իրականացնում է իր գույքի տնօրինումը, օգտագործումը եւ տիրապետումը:

1.11. Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետությունում եւ նրանից դուրս կարող է ստեղծել մասնաճյուղեր եւ ներկայացուցչություններ, ինչպես նաեւ հիմնարկներ, որոնք գործում են Կազմակերպության անունից՝ Կազմակերպության խորհրդի կողմից հաստատված կանոնադրություններին համապատասխան:

1.12. Կազմակերպությունն իր պարտավորություններով պատասխանատվություն է կրում այն գույքով, որի վրա օրենքով կարող է բռնագանձում տարածվել:

1.13. Հայաստանի Հանրապետությունը եւ համայնքները պատասխանատվություն չեն կրում Կազմակերպության պարտավորությունների համար: Կազմակերպությունը պատասխանատվություն չի կրում Հայաստանի Հանրապետության եւ համայնքների պարտավորությունների համար:

1.14. Կազմակերպության իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքով սահմանված կարգով:

1.15. Կազմակերպությունն ունի օրենքով չարգելված բոլոր եղանակներով իր քաղաքացիական իրավունքների պաշտպանության իրավունք:

1.16. Կազմակերպությունը կարող է անդամակցել միջազգային հասարակական միավորումներին եւ կազմակերպություններին, եթե վերջիններիս գործունեությունը համապատասխանում է Կազմակերպության նպատակներին եւ խնդիրներին:

1.17. Կազմակերպությունը ստեղծվում եւ իր գործունեությունը ծավալում է հրապարակայնության, անդամության կամավորության, անդամների իրավահավասարության, ինքնակառավարման, ղեկավարության կոլեգիալության սկզբունքներով: Կազմակերպությունը քաղաքական կամ կրոնական նպատակներ չի հետապնդում:

1.18. Կազմակերպությունը կոչված է ապահովելու եւ նպաստելու Արեւելյան գործընկերության Քաղաքացիական հասարակության ֆորումի (այսուհետ՝ ՔՀՖ) Հայաստանի ազգային պլատֆորմի (այսուհետ՝ ՀԱՊ) առջեւ դրված նպատակների ու խնդիրների իրականացմանը:

1.19. Կազմակերպությունը գործում է Հայաստանի Հարապետության ողջ տարածքում եւ օտարերկրյա պետություններում՝ այդ պետությունների օրենսդրությանը համապատասխան: Կազմակերպության ղեկավար մարմինը գտնվում է Երեւանում:

2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1. Կազմակերպության գործունեության ***առարկան*** է՝ Արեւելյան գործընկերության (ԱլԳ) քաղաքացիական հասարակության ֆորումի ծրագրերի կատարմանը նպաստելը:
Կազմակերպությունը ***նպատակ է*** հետապնդում կազմակերպական եւ տեխնիկական աջակցություն ցուցաբերել ՀԱՊ-ին՝ ԱլԳ ծրագրերի կատարմանը, երկրի ներքին խնդիրների լուծումները ԵՄ չափորոշիչներին համապատասխանեցնելուն, հասարակության բոլոր շերտերի մասնակցայնության եւ տեղեկացվածության

ապահովմանը, ժողովրդավարական բարեփոխումների հետեւողական իրականացմանն ուղղված գործունեության մեջ:

2.2. Կազմակերպությունը գործում է որպես ԱլԳ ՔՀՖ ՀԱՊ գործառնական մարմին: (ՀԱՊ-ը ԱլԳ Քաղաքացիական հասարակության ֆորումի առաքելության եւ սկզբունքների համաձայն հիմնադրված հայաստանյան քաղաքացիական հասարակության կառույցների կամավոր միավորումն է, որի անդամներն իրենց լավագույն ջանքերն են ներդնում՝ կյանքի կոչելու ԱլԳ նպատակները Հայաստանում, ինչպես նաեւ ամբողջ տարածաշրջանում):

2.3. Նշված նպատակներն իրագործելու համար Կազմակերպությունը լուծում է հետեւյալ ***խնդիրները***.

- տեխնիկական եւ կազմակերպական աջակցություն է ցուցաբերում ՀԱՊ-ի եւ դրա մարմինների՝ ՔՀՖ պատվիրակների ընդհանուր ժողովի, ՔՀՖ ընթացիկ համաժողովի պատվիրակների ժողովի, ՀԱՊ գործադիր մարմնի, ՀԱՊ աշխատանքային խմբերի եւ ենթախմբերի բնականոն գործունեությունն ապահովելու եւ դրանց պարբերական հանդիպումների կազմակերպման համար, այդ թվում՝ այդ մարմինների կողմից իրականացվող դրամահավաքների կազմակերպման եւ ֆինանսական միջոցների տնօրինման գործում,
- վերը նշված գործառույթներն իրականացնելու, ինչպես նաեւ ՀԱՊ-ի եւ դրա աշխատանքային խմբերի աշխատանքները կազմակերպելու համար կապ է պահպանում ԱլԳ Քաղաքացիական հասարակության ֆորումի քարտուղարության հետ,
- նպաստում է ՀԱՊ-ին եւ ԱլԳ ՔՀՖ-ին վերաբերող տեղեկատվության տարածմանը եւ դրանց մասին հասարակության լայն զանգվածների իրազեկվածության բարձրացմանը,
- իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ չարգելված եւ սույն Կանոնադրությանը չհակասող այլ գործառույթներ:
- Անհրաժեշտության դեպքում՝ իր կանոնադրությամբ սահմանված նպատակներին համապատասխան իրականացնելու նպատակով զբաղվում է ձեռնարկատիրական գործունեությամբ, այդ նպատակով տնօրինում իր գույքը և գործունեության արդյունքները, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ստեղծում առևտրային կազմակերպություն կամ դառնում դրա մասնակից:

3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԴԱՌՆԱԼՈՒ, ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԵՎ ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՌԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1. Կազմակերպության անդամ կարող են լինել Հայաստանի Հանրապետության տարածքում գործող այն կազմակերպությունները, որոնք ընդունում են սույն Կանոնադրությունը, հանդիսանում են ՔՀՖ տարբեր տարիների Հայաստանի պատվիրակ (պատվիրակ է համարվում ՔՀՖ համաժողովի մասնակցության

պաշտոնական հրավեր ստացած անձը, որն իր կարգավիճակը հաստատում է համաժողովին մասնակցելով) եւ ՔՀՖ Հայաստանի պատվիրակների ժողովի անդամ, օժանդակում են Արեւելյան գործընկերության եւ ԵՄ-Հայաստան համագործակցության խնդիրների եւ նպատակների իրականացմանը, մուծում են մուտքավճարներ եւ պարբերական անդամավճար։ (ՔՀՖ տարբեր տարիների Հայաստանի պատվիրակները անդամակցում են ՔՀՖ Հայաստանի պատվիրակների ընդհանուր ժողովին՝ որեւէ ակնհայտ ձեւով հաստատելով իրենց մասնակցությունն այդ մարմնում, ամեն տարեկան Ընդհանուր ժողովից ոչ ուշ, քան 1 շաբաթ առաջ վերահաստատելով իրենց անդամակցությունը՝ այդ մասին տեղեկացնելով ՔՀՖ Հայաստանի ազգային համակարգողին)։

3.2. Կազմակերպության անդամության մասին ՔՀՖ-ի կողմից լիազորված անձի դիմումը հաստատվում է Կազմակերպության Ընդհանուր ժողովի կողմից՝ դիմումը ստանալուց անմիջապես հետո։

3.3. Կազմակերպության անդամները հանդիսանում են լիիրավ անդամներ եւ օգտվում են հիմնադիրների նույն իրավունքներից եւ պարտականություններից։

3.4. Կազմակերպության յուրաքանչյուր անդամ օգտվում է մեկ ձայնի իրավունքից։

3.5. Կազմակերպությանն անդամակցելու համար կազմակերպությունը պարտավոր է՝

- ծանոթանալ Կազմակերպության Կանոնադրությանը,
- Կազմակերպության խորհրդին ներկայացնել դիմում, կցելով անդամակցելու վերաբերյալ կազմակերպության կառավարման իրավասու մարմնի որոշումը,
- կատարել մուտքավճար,
- անհրաժեշտության դեպքում ներկայացնել ապացույցներ, որոնք կհավաստեն, որ սույն կազմակերպությունը հանդիսանում է ՔՀՖ որեւէ տարվա Հայաստանի պատվիրակ։

3.6. Կազմակերպության խորհրդի կողմից անդամակցության վերաբերյալ որոշման կայացման մասին տեղեկությունը ստանալուց հետո դիմորդը 15 օրվա ընթացքում պարտավոր է կատարել միանվագ մուտքավճար՝ 12.000 /տասներկու հազար/ ՀՀ դրամի չափով, որ հաշվարկվում է որպես տվյալ տարվա անդամավճար։

3.7. Կազմակերպության անդամները պարտավոր են վճարել տարեկան անդամավճար, որը սահմանվում է կայուն դրամական գումարով՝ 12.000 /տասներկու հազար/ ՀՀ դրամի չափով։ Կազմակերպության անդամները տարեկան անդամավճարը պարտավոր են միանվագ վճարել մինչեւ հաշվետու (տվյալ) տարվա հունվարի 31-ը ներառյալ։ Անդամավճարի մուծումը կատարվում է ՀՀ դրամով։

3.8. Կազմակերպության անդամները, Կանոնադրության **3.7.** կետով սահմանված անդամավճարներից բացի, Կազմակերպությանը կարող են նվիրատվության կարգով տրամադրել նաեւ այլ դրամական կամ գույքային միջոցներ:

3.9. Կազմակերպության անդամությունը դադարում է՝

- անդամության դադարեցման մասին Կազմակերպության խորհրդին դիմում ներկայացնելու,
- անդամ կազմակերպության լուծարման,
- Կազմակերպության լուծարման դեպքերում:

3.10. Բացի սույն Կանոնադրության **3.9.** կետով նախատեսված դեպքերի՝ Կազմակերպության անդամ կազմակերպության անդամությունը կարող է դադարեցվել նաեւ Կազմակերպության անդամների Ընդհանուր ժողովի՝ անդամությունից զրկելու մասին որոշմամբ՝ սույն Կանոնադրության **3.11.** կետով սահմանված դեպքերում:

3.11. Կազմակերպության անդամ հանդիսացող կազմակերպությունը կարող է զրկվել անդամությունից, եթե՝

- չի կատարում կամ ոչ պատշաճ է կատարում սույն Կանոնադրությամբ եւ Կազմակերպության հիմնադիր պայմանագրով նախատեսված պարտականությունները,
- իր գործողություններով խոչընդոտում է Կազմակերպության եւ ՀԱՊ-ի գործունեությանը,
- չի վճարում մուտքավճարներ եւ տարեկան անդամավճարներ,
- տվյալ տարվա ընթացքում դրա պաշտոնական ներկայացուցիչը կամ դրա կողմից պատշաճ լիազորված ներկայացուցիչը անհարգելի բացակայել է Կազմակերպության ընդհանուր ժողովի հերթական եւ/կամ արտահերթ երկու ժողովներից: Բացակայության անհարգելի լինելու վերաբերյալ որոշումն ընդունվում է Կազմակերպության խորհրդի կողմից,
- դադարեցվել է նրա ՀԱՊ Հայաստանի պատվիրակների ընդհանուր ժողովի անդամությունը:

4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1. Կազմակերպության անդամներն իրավունք ունեն.

- մասնակցել Կազմակերպության ընդհանուր ժողովի աշխատանքներին եւ հարցեր ներկայացնել ընդհանուր ժողովի եւ խորհրդի քննարկմանը,
- մասնակցել Կազմակերպության գործունեության ընդհանուր ուղղությունների մշակմանը,

- ընտրել եւ ընտրվել Կազմակերպության ընտրովի մարմինների կազմում, սույն Կանոնադրության համապատասխան,
- մասնակցել Կազմակերպության բյուջեի քննարկմանը,
- Կազմակերպությունից պահանջելու տեղեկություններ, ստանալու փաստաթղթերի պատճեններ՝ Կազմակերպության կանոնադրության փոփոխությունների, մարմինների արձանագրությունների, որոշումների, գույքի կառավարումից ստացված դրամական միջոցների վերաբերյալ, ինչպես նաև ստանալու նրա ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրած անկախ աուդիտորի եզրակացության պատճենը,
- ծանոթանալու Կազմակերպության մարմինների արձանագրություններին, ստանալ նրանց ընդունած որոշումների պատճենները,
- ցանկացած դեպքում անվճար օգտվել Կազմակերպության ծառայություններից,
- վերադասության կարգով կամ դատական կարգով բողոքարկել Կազմակերպության մարմինների որոշումները: Կազմակերպության անդամի կողմից գործադիր մարմնի՝ Նախագահի որոշումների բողոքարկումն իրականացվում է ընդհանուր ժողովին համապատասխան դիմում ներկայացնելու եղանակով: Դիմումը քննարկում է ընդհանուր ժողովը ապահովելով դիմումատուի լսված լինելու իրավունքը: Դիմումի քննարկումը կարող է կատարվել նաև հեռակա կարգով, ապահովելով դիմումատուի լսված լինելու իրավունքը,
- ժամանակին տեղեկացված լինել Կազմակերպության եւ ընդհանրապես ՔՀՖ-ի եւ ՀԱՊ-ի շրջանակներում առկա գործընթացների եւ իրականացվող միջոցառումների մասին,
- իրականացնել օրենքով և սույն Կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներ:

4.2. Կազմակերպության անդամները պարտավոր են.

- կատարել Կազմակերպության կանոնադրական պահանջները և կառավարման մարմինների որոշումները,
- մասնակցել Կազմակերպության Ընդհանուր ժողովի աշխատանքներին,
- չարատավորել, այլ բարձրացնել Կազմակերպության հեղինակությունը,
- հետեւել սույն Կանոնադրությանը,
- նպաստել Կազմակերպության խնդիրների, նպատակների եւ նրա ղեկավար մարմինների որոշումների իրագործմանը,
- բարեխղճորեն կատարել կառավարման մարմինների որոշմամբ իրենց վրա դրված պարտականությունները,
- կատարել փոխադարձ եւ կամավոր ստանձնած այլ պարտավորություններ,
- վճարել անդամավճար:

5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Կազմակերպության կառավարման մարմիններն են.

- Կազմակերպության անդամների ընդհանուր ժողովը (այսուհետ՝ Ընդհանուր ժողով)
- Կազմակերպության Կոլեգիալ կառավարման մարմինը՝ խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ)
- Կազմակերպության վերստուգող մարմինը՝ վերստուգող հանձնաժողովը (այսուհետ՝ Վերստուգող հանձնաժողով)
- Գործադիր մարմինը՝ Նախագահը, ով ի պաշտոնե հանդիսանում է Կազմակերպության Խորհրդի Նախագահ:

5.2. Կազմակերպության կառավարման մամիններն իրենց գործունեությունն իրականացնելիս եւ որոշումներ ընդունելիս ղեկավարվում են օրենքներով եւ սույն Կանոնադրությամբ սահմանված պահանջներով: Կազմակերպության կառավարման մարմինները (դրանց անդամները) օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն են կրում իրենց գործողությունների (անգործության) հետեւանքով Կազմակերպությանը պատճառված վնասի համար:

6. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

6.1. Կազմակերպության կառավարման բարձրագույն մարմինը՝ Ընդհանուր ժողովն է:
6.2. Ընդհանուր ժողովն իրավասու է՝
- կատարելու Կազմակերպության կանոնադրությունում փոփոխություններ կամ լրացումներ կամ նոր խմբագրությամբ հաստատելու կանոնադրությունը,
- ստեղծելու այլ իրավաբանական անձ, որոշումներ ընդունելու այլ կազմակերպությունում Կազմակերպության մասնակցության մասին,
- հաստատելու Կազմակերպության կառուցվածքը,
- հաստատելու Կազմակերպության ռազմավարությունը,
- ձեւավորել խորհուրդը,
- տարին մեկ անգամ հաստատելու Գործադիր մարմնի՝ Նախագահի կողմից Ընդհանուր ժողովի գումարմանը նախորդող տարվա ընթացքում հաստատված Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները,
- դադարեցնելու Կազմակերպության մարմինների իրավական ակտերի պահանջներին և կանոնադրությանը հակասող որոշումների գործողությունը,
- ընդունելու որոշում Կազմակերպության վերակազմակերպման մասին,
- ընդունելու որոշում Կազմակերպությունը լուծարելու մասին, բացառությամբ դատարանի վճռով լուծարվելու դեպքերի,
- հաստատել Կազմակերպության խորհրդի հաշվետվությունները,
- հաստատել Կազմակերպության Վերստուգող հանձնաժողովի հաշվետվությունները,
- հերթական ժամանակաշրջանի համար որոշել Կազմակերպության գործունեության հիմնական ուղղությունները,

- որոշել Կազմակերպության անդամներին ընդունելու եւ հեռացնելու հարցերը,
- ընտրել Վերստուգող հանձնաժողով եւ նրա նախագահին,
- քննարկել Ընդհանուր ժողովին Կազմակերպության անդամների կողմից ուղղված բողոքները, դիտողությունները եւ առաջարկները,
- հաստատել Կազմակերպության բյուջեն,
- իրականացնել օրենքով, սույն Կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ, ինչպես նաեւ մյուս մարմինների լիազորությանը վերապահված և չվերապահված հարցերով ընդունել որոշումներ:

6.3. Ընդհանուր ժողով հրավիրելու եվ անցկացնելու կարգը

- Ընդհանուր ժողովն իրականացնում է Կազմակերպության ղեկավարումը՝ հերթական կամ արտահերթ ժողովներ գումարելու միջոցով,
- տարեկան Ընդհանուր ժողովը գումարվում է Կազմակերպության Գործադիր մարմնի՝նախագահի որոշմամբ ԱԼԳ ՔՀՖ տարեկան համաժողովից հետո, բայց ոչ ուշ, քան մեկ ամսվա ընթացքում,
- արտահերթ Ընդհանուր ժողով հրավիրվում է ըստ անհրաժեշտության, Կազմակերպության Գործադիր մարմնի՝ Նախագահի որոշմամբ կամ խորհրդի որոշմամբ՝ անդամների 1/3-ի պահանջով կամ ընդհանուր ժողովի անդամների 1/3-ի պահանջով,
- Ընդհանուր ժողովի օրակարգի, դրա անցկացման տեղի, օրվա, ժամի եւ օրակարգի մասին Կազմակերպության անդամները ծանուցվում են ոչ ուշ, քան ժողովի սկզբից 72 ժամ առաջ,
- Ընդհանուր ժողովն անցկացվում է Կազմակերպության անդամների համատեղ հավաքի ձեւով կամ հեռակա կարգով՝ հեռահաղորդակցության միջոցների օգտագործմամբ,
- Ընդհանուր ժողովն իրավասու է (քվորում ունի), եթե մասնակցում է անդամների ընդհանուր թվի կեսից ավելին,
- Ընդհանուր ժողովին մասնակցում է Կազմակերպության անդամ կազմակերպության ղեկավարը: Վերջինիս մասնակցության անհնարինության դեպքում, կազմակերպության ղեկավարը կարող է լիազորել այլ անձի,
- Ընդհանուր ժողովի որոշումներն ընդունվում են ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, բացառությամբ սույն Կանոնադրությամբ նախատեսված դեպքերի:
- Ընդհանուր ժողովը նախագահում է Կազմակերպության Գործադիր մարմինը՝ նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում՝ Կազմակերպության Խորհրդի անդամներից որեւէ մեկը՝ Խորհրդի մյուս մասնակիցների համաձայնությամբ:

7. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

7.1. Խորհուրդը մշտապես գործող մարմին է, որը ղեկավարում է Կազմակերպության գործունեությունն Ընդհանուր ժողովների միջեւ ընկած ժամանակահատվածում:

7.2. Խորհրդի անդամները 6-ն են՝ ՔՀՖ ազգային համակարգողը եւ ՀԱՊ աշխատանքային խմբերի համակարգողները։ ՔՀՖ ազգային համակարգողը ընտրվում է ՔՀՖ ընթացիկ համաժողովի Հայաստանի պատվիրակների ժողովի կողմից եւ վերջինիս կազմից (ընթացիկ համաժողովի պատվիրակ է համարվում ընթացիկ տարում ՔՀՖ համաժողովի մասնակցության պաշտոնական հրավեր ստացած եւ համաժողովին մասնակցած անձը) ձայների պարզ մեծամասնությամբ։
Այն դեպքերում, երբ ՀԱՊ գործադիր մարմնի (ազգային համակարգող եւ աշխատանքային խմբերի համակարգողներ) անդամներից 5-ից պակասն են ցանկանում Կազմակերպության անդամ լինել, վերջինիս խորհուրդի կազմը լրացվում է այլ անդամներից, Ընդհանուր ժողովում ընտրության եղանակով։

7.3. Խորհրդի անդամները ընտրվում են Ընդհանուր ժողովի կողմից 2 տարի ժամկետով։

7.4. Խորհրդի անդամներն իրենց գործառույթներն իրականացնում են հասարակական հիմունքներով, առանց որեւէ վարձավճարի, սակայն կարող են ստանալ իրենց ճանապարհային եւ այլ ծախսերի փոխհատուցում, եթե այդ ծախսերը ողջամիտ են եւ բխում են Խորհրդի գործունեության շրջանակներում արված գործառույթներից։

7.5. Խորհուրդն ունի հետեւյալ իրավասությունը.

- Ձեւավորում է աշխատակազմը։
- Ընտրում է Գործադիր մարմնին՝ Նախագահին և դադարեցնում վերջինիս լիազորությունները։
- հաստատում է Կազմակերպության բյուջեի եւ Գործադիր մարմնի՝ Նախագահի կողմից ներկայացված գործողությունների տարեկան ծրագրի առաջարկը՝ մինչեւ Ընդհանուր ժողովի կողմից դրա վերջնական հաստատումը,
- կազմում եւ Ընդհանուր ժողովին ներկայացնում է Կազմակերպության տարեկան գործողությունների եւ ֆինանսական հաշվետվությունները,
- քննարկում եւ հաստատում է Կազմակերպության ծախսերի եւ եկամուտների ամենամյա նախահաշիվը եւ արտաքին աուդիտի զեկույցը,
- ընտրում է Կազմակերպության աուդիտն իրականացնող անձին (աուդիտորին), եթե օրենքի համաձայն՝ Կազմակերպությունը ենթակա է պարտադիր աուդիտի,
- սահմանում է Գործադիր մարմնի՝ Նախագահի վարձատրության կարգը և պայմանները,
- որոշումներ է ընդունում Կազմակերպության անունից վարկ, պարտավորություն վերցնելու, ավանդ բացելու եւ այլ ֆինանսական գործառնություններ իրականացնելու մասին,
- որոշումներ է ընդունում Կազմակերպության անունից երկու միլիոն դրամից ավելի արժողությամբ գույք ձեռք բերելու, տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու, կառավարելու եւ հինգ հարյուր հազար դրամից ավելի արժողությամբ գույք օտարելու եւ դուրս գրելու վերաբերյալ։

- որոշումներ է ընդունում Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումներ կամ հիմնարկներ ստեղծելու և դրանց կանոնադրությունները հաստատելու մասին,
- լուծում է օրենքով, սույն Կանոնադրությամբ եւ Կազմակերպության Ընդհանուր ժողովի կողմից իրեն հանձնարարված այլ հարցեր։

7.6. Խորհրդի նիստերը գումարվում են ըստ անհրաժեշտության, Կազմակերպության Խորհրդի անդամների 1/3-ի կամ Կազմակերպության Գործադիր մարմնի՝ Նախագահի պահանջով, բայց ոչ ուշ քան տարին երկու անգամ։ Խորհրդի նիստերն իրավասու են, եթե դրան ներկա են անդամների 2/3-ը։

7.7. Խորհրդի որոշումները կայացվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ։ Կազմակերպության անունից ֆինանսական պարտավորություններ ստանձնելու, դրան պատկանող անշարժ գույքի ձեռք բերման եւ օտարման մասին որոշումները կայացվում են ձայների 2/3-ով։ Ձայների հավասարության դեպքում Գործադիր մարմնի նախագահի ձայնը համարվում է վճռորոշ։ Խորհրդի նիստերն արձանագրվում են եւ ձայնագրվում։ Արձանագրությունը կազմվում է նիստի կայացման օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում։ Խորհրդի նիստի արձանագրությունը ստորագրվում է Խորհրդի նախագահի եւ նիստի քարտուղարի կողմից։ Խորհուրդը հաշվետու է Ընդհանուր ժողովին։

8. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆԸ՝ ՆԱԽԱԳԱՀԸ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԸ

8.1. Գործադիր մարմինը՝ Նախագահը եւ աշխատակազմն իրականացնում են Կազմակերպության ընթացիկ գործունեության կառավարումը։

8.2. Գործադիր մարմինը՝ Նախագահը ընտրվում է Խորհրդի կողմից մեկ տարի ժամկետով, սակայն այդ ժամկետը լրանալուց հետո շարունակում է գործադիր մարմնի՝ Նախագահի լիազորությունների կատարումը մինչև նոր գործադիր մարմնի՝ Նախագահի ընտրությունը կամ իր վերընտրությունը։

8.3. Գործադիր մարմինը՝ Նախագահը

- իր իրավասության սահմաններում, առանց լիազորագրի գործում է Կազմակերպության անունից,
- ապահովում է Ընդհանուր ժողովի և Խորհրդի որոշումների կատարումը,
- կանոնադրությամբ սահմանված կարգով և չափով տնօրինում է և կառավարում Կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Կազմակերպության անունից,
- ներկայացնում է Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում,

- տալիս է լիազորագրեր,
- բանկերում բացում է Կազմակերպության հաշվարկային (այդ թվում՝ արտարժութային) և այլ հաշիվներ,
- իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, կատարման համար տալիս է պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,
- հաստատում է Կազմակերպության հաստիքացուցակը, և տարեկան ծախսերի նախահաշիվը,
- հաստատում է Կազմակերպության գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերը, այդ թվում՝ նրա առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ներքին կարգապահական և այլ կանոնները,
- հաստատում է Կազմակերպության, ինչպես նաև նրա մարմինների հաշվետվությունները,
- իրականացնում է օրենքով եւ Կազմակերպության կանոնադրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ ինչպես նաև Ընդհանուր ժողովի և Խորհրդի որոշումները:
- Ի պաշտոնե հանդիսանում է Կազմակերպության Խորհրդի անդամ:
- Ի պաշտոնե կազմակերպում է Խորհրդի աշխատանքները.
- Ի պաշտոնե գումարում եւ վարում է Խորհրդի նիստերը,
- Ի պաշտոնե կազմակերպում է Խորհրդի նիստերի արձանագրությունների վարումը, Խորհրդի անունից եւ նրա համաձայնությամբ ստորագրում է Խորհրդի լիազորություններին վերաբերող փաստաթղթեր, այդ թվում՝ աշխատանքային պայմանագրեր:

8.4. Գործադիր մարմինը՝ Նախագահը ղեկավարում է Կազմակերպության աշխատակազմի ամենօրյա գործունեությունը, պատասխանատու է Խորհրդի եւ Ընդհանուր ժողովի առջեւ՝ դրա արդյունքների համար, այդ թվում ֆինանսական միջոցների օգտագործման եւ Խորհրդի որոշումների իրականացման համար:
Գործադիր մարմնի՝ Նախագահի իրավասություններն ի թիվս այլոց ներառում են.

- Կազմակերպության տարեկան գործողությունների ծրագրի մշակում՝ դրա առջեւ դրված խնդիրներին եւ նպատակներին համապատասխան,
- Կազմակերպության ծախսերի եւ եկամուտների տարեկան նախահաշվի կազմում,
- ֆինանսական միջոցների հավաքագրման կազմակերպում:

Գործադիր մարմինը՝ Նախագահը իրավասու է որոշումներ ընդունել մինչեւ երկու միլիոն դրամ արժողությամբ գույք ձեռք բերելու, տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու եւ մինչեւ հինգ հարյուր հազար դրամ արժողությամբ գույք օտարելու եւ դուրս գրելու վերաբերյալ:

8.5. Գործադիր մարմինը՝ Նախագահը կրում է օրենքով նախատեսված պատասխանատվություն օրենքների, իրավական այլ ակտերի, Կազմակերպության

կանոնադրության, Ընդհանուր ժողովի որոշումների կամ կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

9. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐՍՏՈՒԳՈՂ ՄԱՐՄԻՆԸ

9.1. Վերստուգող հանձնաժողովը ընտրվում է Կազմակերպության անդամների Ընդհանուր ժողովի կողմից:

9.2. Կազմակերպության ֆինանսատնտեսական եւ ղեկավար մարմինների գործունեության վերահսկողությունն իրականացնում է Կազմակերպության վերստուգող հանձնաժողովը, որն ընտրվում է Կազմակերպության տարեկան Ընդհանուր ժողովի կողմից, անդամ հանդիսացող կազմակերպությունների շրջանակից՝ թվով երեք հոգի կազմով, երկու տարի ժամկետով:

9.3. Վերստուգող հանձնաժողովի անդամները չեն կարող ընտրվել Կազմակերպության ղեկավար մարմնիններում:

9.4. Վերստուգող հանձնաժողովը հարցեր է քննարկում եւ որոշումներ ընդունում հանձնաժողովի անդամների ձայների կեսից ավելիի մասնակցությամբ եւ ձայների պարզ մեծամասնությամբ, համապատասխանաբար:

9.5. Վերստուգող մարմինն իրավասու է՝

- Առնվազն տարին մեկ անցկացնելու Կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության ստուգում, որի տեւողությունը չի կարող լինել ավելին, քան մեկ ամիս,
- ցանկացած ժամանակ ծանոթանալու Կազմակերպության գործունեությանն առնչվող բոլոր փաստաթղթերին և Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված կարգով պարտադիր քննարկման ենթակա առաջարկություններ ներկայացնելու նրա մարմիններին,
- պահանջելու և ստանալու Կազմակերպության գործունեության վերաբերյալ տեղեկություններ,
- իրականացնելու Կազմակերպության կանոնադրությամբ կամ Ընդհանուր Ժողովի որոշմամբ նախատեսված այլ լիազորություններ:

9.6 Ընդհանուր ժողովի որոշմամբ՝ Վերստուգող հանձնաժողովն իրականացնում է կազմակերպության վերստուգում:

9.7. Վերստուգող հանձնաժողովի անդամները Կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության ստուգման համար միանվագ վարձատրվում են Քարտուղարության բյուջեից՝ յուրաքանչյուրը Գործադիր մարմնի՝ Նախագահի ամսական վարձատրության մեկ քառորդի չափով:

10. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ, ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱԳՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐՆ ՈՒ ԴՐԱ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՁԵՎԵՐԸ

10.1. Կազմակերպությունն իրավասու է իր անունից կնքել պայմանագրեր ու համաձայնագրեր, ձեռք բերել գույքային եւ անձնական ոչ գույքային իրավունքներ եւ պարտականություններ, ներկայացնել ու պաշտպանել իր եւ իր անդամների շահերն այլ հասարակական միավորումներում, դատարանում, պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններում:

10.2. Կազմակերպությունը որպես սեփականություն կարող է ունենալ անշարժ և շարժական գույք՝ շենքեր, շինություններ, տրանսպորտային միջոցներ, սարքավորումներ, դրամական միջոցներ, արժեթղթեր և օրենքով չարգելված այլ գույք:

10.3. Կազմակերպության գուքի ձևավորման աղբյուրներն են.

- անդամավճարները եւ նպատակային մուծումները,
- դրամաշնորհները, ֆիզիկական եւ իրավաբանական անձանց (այդ թվում՝ արտասահմանյան) նվիրատվությունները եւ հանգանակությունները,
- Կազմակերպության ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցները,
- օրենքով չարգելված այլ մուտքերը եւ եկամուտները:

10.4. Կազմակերպության միջոցները կարող են օգտագործվել կանոնադրությամբ սահմանված նպատակների և խնդիրների իրականացման համար: Կազմակերպության գույքը, այդ թվում՝ ձեռնարկատիրական գործունեությունից ստացված շահույթը նրա անդամների միջև չի կարող բաշխվել:

10.5. Կազմակերպությունը օրենքով սահմանված կարգով կարող է զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, հիմնադրել կամ մասնակցել տնտեսական ընկերություններում եւ ընկերակցություններում, որից ստացված շահույթն օգտագործվում է Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված նպատակներով:

11.ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

11.1. Կազմակերպությունը կարող է լուծարվել Ընդհանուր ժողովի որոշմամբ՝ բոլոր անդամների ձայների 2/3-ով, կամ դատարանի որոշմամբ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

11.2. Լուծարման դեպքում Կազմակերպության Ընդհանուր ժողովը ստեղծում է լուծարային հանձնաժողով, որոշում լուծարման կարգը եւ ժամկետները, կազմում է Կազմակերպության միջոցների վերջնահաշվարկը:

11.3. Լուծարումից հետո, պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքն ուղղվում է Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, դրա անհնարինության դեպքում դրամական միջոցները փոխանցվում են պետական բյուջե, իսկ այլ գույքը սեփականության իրավունքով փոխանցվում է Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս Կառավարության, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

11.4. Կազմակերպության Ընդհանուր ժողովի որոշմամբ այն կարող է վերակազմակերպվել՝ օրենքով նախատեսված կարգով եւ ձեւերով: